ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՒԵՐԻ ԳԻՇԻ 60-ԲԵԼԵԱՆԸ

—

Նոր-Նախիջևանի Հայոց Բարեգործական Ընկերութիւնն կոմիտէ՝ Նրա Նախագահ Գր. Զաքարուշեանը հոկտ. 12-ին հեռանալ հեռագրեցին է տուել Էջմիածին՝ Վեհափառ Կաթողիկոսի անունով.

«Նորին Ս. Օծութիւն Գէորգ Ե Պատրիարքին և Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

«Այրուրենը և տպագրական մամուլը մեզ փրկում են տգիտութիւնից ու կեղծիքից, որոնց մէջ խարխլուում են անգրագէտները. կայն բանալով մեր առաջ բոլոր գիտութիւնների դռները, նրանք գիտութիւնների լուսաւոր ուղիով տանում են մեզ դէպի մեծ ու արքական հշմարտութիւնը, որպէսզի սին մէկայն պէտք է լինի մեր կեանքի նպատակն ու ձգտումը

«Ու մեր ժողովրդական տօնի մեծ օրը խոնարհելով մեր գլուխը մեծ արքի սեղանի առաջ, արքի, որ ուսեց մեզ այբուբեն, Հայոց Բարեգործական Ընկերութեան կոմիտէ՝ ես ողջունում եմ Ձեզ, Ձերդ Վեհափառութիւն, և բոլոր ներկայ եղողներին և բռնադատ սրտով Ձեզ հետ միասին ես կը կամենայի բարձր աղաղակել, որպէսզի ինձ լսէին բոլոր հայերը. «Հայրենակիցներս, գիտութիւնից դուրս չը կայ խելացի կեանք. գիտութիւնները ապրում են այբուբենով ու տպագրական մամուլով. թող ուրեմն այսուհետև իւրաքանչիւր գիտակից ու ազնիւ հայի նպատակը լինի՝ աշխատել դպրոցական ֆոնդի ուժեղացմանը, որպէսզի կարող լինենք ապահովել բոլոր հայերի ուսման գործը, որպէսզի չը լինի և ոչ մի անգրագէտ»

«Այդ ուրախալի, բեղուն, լուսաւոր օրը դեռ շատ հեռու է, քանի մեր շուրջը տիրում են սուկ խաւարը. և ես խորապէս հաստատում եմ, որ այդ «օրը՝ մեր Մեսսիան՝ կը գայ։ Ապա ուրեմն աշխատենք և ապրենք յանուն այդ օրվայ իրականացմանը»

—

Թիֆլիսում հրատարակվող վրաց «Թեմի» թերթը հոկտեմբերի 14-ի իր առաջնորդող յօդուածով ողջունում է իր եղբայրակից և հարան հայ ազգի մեծ յոբելեանը, տալով սկզբում մինչև տասերի գիւտը Հայաստանում տիրող դրութեան հակիրճ նկարագիրը և Մեսրոպի ու Սահակի գործունէութիւնը ամփոփ։